

ՔԱՂԱՎԱՐՈՒՄ ԵՄԵՐՈՒՄ

Վիննա, 28 Ապրիլ 1899:

Առաջիկայ Մայիսի 14ին Ռուսիոյ Վճ. Ինքնակալին նախածոնութեամբ Զէնրնկեցութեան համաժողովը պիտի գումարուի Հոլլանդայի Հաագ քաղաքը: Պետութիւններն իրենց պատգամաւորներն արդէն ընտրած են օգնական տալով անոնց ցամաքային եւ ծովային բանակներէն մէյ մէկ բարձրատիման սպայ: Իտալիա միշտ վախ ունի որ ըլլայ թէ Հոլլանդայ Ս. Լա-հանայապետն ալ իրաւորիւ նոյնին մաս-նակցելու նմանապէս ճանկաստան կը բողոքէ Բուլգարիոյ մասնակցելուն այնու որ հաջորդապէս պետութիւն է: Սակայն առաջ-նոյն մասին խօսք ամենեւին չկայ եւ երեւ-ան եւսմ լուրերն չինձու իրատարակուե-ցան շատ անգամ. իսկ երկրորդին պա-տաւական տրուած է թէ ամէն պետութիւն որ առանձին թանկ ունի համաժողովին մասնակցելու իրաւունք ունի:

Անգղիա: Ծայրագոյն-Արեւելից խոռ-վայոյզ խնդիրները վախ կը պատճառէին Ռուսիոյ եւ Անգղիոյ մէջ գծտութիւններ յարուցանելու: Վերջերս երկու մեծ պետու-թեանց արտաքին գործոց պաշտօնարանաց մէջ կրցան համաձայնութիւն մը յառաջ բերել ի մեծ գոհութիւն կրկին իսկ պետու-թեանց:

Աստորիա: Երկու ոսիս ազգայնու-թեանց մէջ գծտութիւնները դադարելէ դեռ շատ հեռու են. Թուն նախարար-գա-րեւելցն այնպիսի նեղ վիճակի մէջ է որ չի կրնար համարձակիլ Նորիդարան բանա-լու: Գաւառական ժողովներն իրենց գոր-ծունէութիւնը դեռ կը շարունակեն:

Գաղղիա: Agence Havasի տուած վեր-ջին տեղեկութեանց համեմատ՝ Դրեյֆուսի եւ իւր բարեկամաց յարուցած տագնա-պալից խնդիրը՝ մինչեւ Մայիսի 20 լու-ծուած պիտի ըլլայ, այնու որ նոյն ատեն-ները Վճառքի ատենան իւր խուզարկու-թիւններն ու նիստերն աւարտած ըլլալով իւր վճիռը պիտի տայ, — եթէ կարելի է հաստատայ:

Այնչափ մեծ խնամով եւ զգուշու-թեամբ ծածուկ պահուած Դրեյֆուսի դա-տին խուզարկութեանց պատկանեալ ար-ձանագրութեանց, վկայութեանց են հաւ-արածոյն, որմէ Վճառքի ատենին ան-դամոց թուոյն համեմատ՝ սակաւաթիւ օրինակներ միայն տալուած էին, ան-շուշտ Դրեյֆուսականի մը մատնութեամբը՝ “Փիգառոս”, Դրեյֆուսեանց կողմակից օրաթերթը ձեռք բերած ըլլալով մաս մաս իւրաքանչիւր համալուար վկային տուած վկայութիւնն եւ յայտնած կարծիքները՝ կը իրատարակէ անոր մէջէն, քայք միշտ այն ուղղութեամբ որ իւր թէ Դրեյֆուս անմեղ եղած ըլլայ: Այս բովանդակ Պա-րիսի մէջ մեծ sensation յառաջ բերող դէպ-քին հետեւութիւնն եղան “Փիգառոսի”, խմբագրատան մէջ ոստիկանական բազ-մաթիւ եւ խիստ խուզարկութիւնները՝ որ-ոնք սակայն դրական արդիւնք մը չունե-ցան: “Փիգառոս”, դրամական շնչին տու-գանքի մը դատապարտուեցաւ, սակայն այս գինը չի խափաներ իւր իրատարակու-թիւնները շարունակելու:

Եռնաստան: Զէմիս իւր պաշտօ-նարանումն ինկաւ: Թագաւորն յանձնեց Նոր պաշտօնարանին կազմակերպութիւնը՝ թէնդրեպին մը է նաեւ ներքին գործոց պաշտօնեայ: Միւս պաշտօնեաներէն Աթու Ռումանոս՝ արտաքին գործոց, Սիմեոնովսկի, Էմիլիոնովսկի, Էմիլիոնովսկի պատերազմի, Պատուրիս ծովակալութեան, Լարապա-ովսկի արդարութեան եւ Էֆէմբախաս կրօնի պաշտօնեայ են:

Ռումանիա ալ իւր հին պաշտօնա-րանին տապալումը տեսաւ: Նոր պաշտօ-նարանը կազմակերպուեցաւ ի ձեռն Կան-տակուզինոյի՝ հետեւեալ կերպով. ինք՝ Կանտակուզինոյ՝ գահեւելց եւ ներքին գոր-ծոց, զօրավար Մանօ ելեւմոից, զօրավար Ժակ Լաւոյարի՝ պատերազմի, Դիվերսի արդարութեան, Տակէ Խոնէսոյ կրթու-թեան, Ժան Լաւոյարի՝ արտաքին գոր-ծոց եւ Տրիւ. Խաւատի հասարակաց գործոց պաշտօնեայ են: Կանտակուզինոյ Լաւկար Կատարգիսի մահուանէն ետեւ՝ պահպանու-ղականաց առաջնորդն է:

Իռապիոյ: Թագաւորն ընկերակցու-թեամբ իւր Մարգարիտա ամուսնոյն դէպ ի Սարդինիա ճանապարհորդութիւն մ'ը-

րուս: Այս առթիւ Անգղիական պետութիւնը թագաւորական ընտանիքն ողջունելու համար ուզեց պատերազմական նաւատորմով մի դրկել ընդ յառաջ: Նաւատորմիդն ուշացած ըլլալով չկրցաւ Կալեարիի առջեւ հնչալէս դիտուած էր, արքունիքը ողջունել: քայց հասաւ անոր Գոլֆոյ դէլեի Արանշիի առջեւ: Նաւատորմիդն առաքուաւ զուտ քաղաքավարական ծես մըն էր եւ քաղաքական նպատակ չունէր:

Միացեալ-Նամանգք: Փիլիպպեան կղզեաց վրայ՝ ապստամբաց հետ միտած պատերազմին մէջ՝ Ամերիկացիք մեծամեծ դժուարութեանց կը հանդիպէին. եւ չնայելով իրենց Նիւ-Եորկ դրկած բազմաթիւ յաղթութեանց լրեւրուն իրենց ձեռք ձգած եւ նուաճած բազմաթիւ տեղերէն եւ վայրերէն ստիպուած եղան քաշուելու, մանաւանդ իսկ ապստամբք կրցան ամերիկացի ամբողջ շոկատ մը 38 սպայով դարանի մէջ ձգել եւ գերել: Ամերիկացիք քիչ ժամանակէն՝ 28000ի բանակ մ'ալ պիտի դրկեն եղբը Փիլիպպեան կղզիները: Սակայն ապստամբաց մէջ ալ երկպառակութիւնք կը սարկին, եւ շատերն ալ ծանծրացած այս անյաշող եւ անյոյս պատերազմէն՝ Ամերիկացեաց հետ հաշտութիւն կը պահանջեն:

Ռուսաստանն ասկէ քանի մ'որ յառաջ, Պարսկաստանի հետ մասնաւոր բանակցութեանց միջոցաւ Պարսից ծոցին մէջ նաւահանգիստ մ'ունենալու իրաւունքը ձեռք ձգեց: Այս նաւահանգիստն որ ըստ India Timesի Բէնդէրաբքաս քաղաքն ըլլալու է Ռուսաստան կարող է գրաւել երբ որ ուզէ:

Սպանիա: Ապրիլ 17ին կատարեցան Խորհրդանշոցի պատգամաւորաց ընտրութիւնները, որոնց արդիւնքն հետեւեալն է: Ընտրուողներէն 180 հոգի՝ Սիլվելայի կողմակից, 33 հոգի՝ Պոլիվելլեյայի կողմակից, 30 հոգի՝ անդալուսեան, 18 հոգի՝ Տէտուանի կողմակից, 86 հոգի՝ ազատամիտ, 30 հոգի՝ Գոմազոյի կողմակից, 15 հոգի՝ հաւարակապետական, 5 հոգի՝ Ռոմերոյի կողմակից եւ 4 հոգի՝ Կարդուսանն են: Այս պարագայից մէջ՝ Սիլվելայի հակառակորդք շատ դիւրաւ կարող են գինքը տապալել: — Զինուորական պատուոյ առեանը երկու բարձրատիեան սպայ մերժած է

բանակէն. ասոնցմէ մին է Զամորա զնդապետը, որ Կուբայի պատերազմին մասնակցած էր: Նմանապէս երկրորդն ալ մասնակցած էր Փիլիպպեան կղզեաց վրայ միտած պատերազմին:

ՄՏԵՓԸՆՈՍ ԱԶԱՐԵԱՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ +

Հանդիսիս վերջին թերթն մերենային Հիանձնած՝ ընդունեցանք Կոստանդնուպոլսէն պաշտօնական հեռագիր մը Միաբանութեանս ուղղուած, որ կը ծանուցանէր թէ Սայիս 1ի գիշերը՝ Գեբր. Գեբր. Հոգեւոր Տէրն Սոսփաննոս Ըգարեան Պետրոս Ժ. Կաթողիկոս Կիլիկիոյ եւ Պատրիարք Հռովմէական Հայոց վարձաններ է թողարտապով:



ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ — Խիկար եւ իւր իմաստութիւնը. 129:

ՊԱՏՄԱԿԱՆ — Գեղացիք զոնիսարեթուպոլսեցի կ'ամբաստանեն թէ իրենց երկինքն ձեռքեցնել առած են. 133: — Պարսկաստանի Հայերը, նրանց անցեալը, ներկան եւ ապագան. 141:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ — Եւգլիկոյ Հայոց գաւառաբարբառը. 145: — Նախահայերէնի հետքեր գտնելու մ. 147:

ՀԱՄԻՍՏԱԿԱՆ — Նախակիլիկեան-հայեան Նշաշաքոզ Նոր Կնքը մ'ալ. (պատկերով) 149:

ՆՍԵԻՆՍԵԼԷ

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ. 160:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԷ ԺԱՂԱՅԺՈՒՆՔ — 1. Տըթ. Վ.

Ե. Թորգոմանի հրաժարականը: — 2. Լեհահայ

դէմքեր: — 3. Աստու Վոյթ Դ: — 4. Հնդրիկոս

Կիւլեթո: — 5. Ազգազրական Հանդէս: — 6.

Պոնիւհն, — Նոր լրագիր մ'ալ. 167:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 169:



ՀՐԱՍԱՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐԱՅԻՐ

Կ. ԲԱՓԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆԶ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԹԵՐԻԵԱՆ 8 ՊԱՐԱՆ